

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

**Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական
պալատի կողմից թիվ ՍնԴ/0091/04/19 սնանկության գործով 2025
թվականի 07-ի կայացված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի
վերաբերյալ**

07.07.2025 թվական

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան), 2025 թվականի հուլիսի 07-ին գրավոր ընթացակարգով քննելով «Յունիբանկ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.08.2022 թվականի որոշման դեմ՝ ըստ Բանկի դիմումի՝ Էմիլ Պետրոսյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին, որոշել է մերժել վճռաբեկ բողոքը: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.08.2022 թվականի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Վճռաբեկ դատարանի դատավոր Էդ. Սեդրակյանս, համաձայն չլինելով վերը նշված որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի դատավորների մեծամասնության կարծիքի հետ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, շարադրում եմ իմ հատուկ կարծիքն այդ մասերի վերաբերյալ:

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Բանկը պահանջել է Էմիլ Պետրոսյանին ճանաչել սնանկ:

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 25.03.2019 թվականի վճռով դիմումը բավարարվել է:

Դատարանի 11.06.2019 թվականի որոշմամբ հաստատվել է պարտապանի սնանկության գործով պահանջների վերջնական ցուցակը:

Դատարանի 23.08.2019 թվականի որոշմամբ հետախուզում է հայտարարվել պարտապանի անվամբ հաշվառված BMW 730i մակնիշի 07 00 784 պետական համարանիշի ավտոմեքենայի նկատմամբ:

Դատարանի 13.09.2019 թվականի որոշմամբ հետախուզում է հայտարարվել պարտապանի անվամբ հաշվառված PORSCHE CAYENNE V8 4.5L մակնիշի 34 AS 748 պետական համարանիշի ավտոմեքենայի նկատմամբ:

Դատարանի 03.03.2020 թվականի որոշմամբ թույլատրվել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, ՀՀ Գեղարքունիքի մարզի, Վարսեր համայնքի, Երևանյան խճուղի թիվ 9/1 հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքը՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Դատարանի 21.05.2021 թվականի որոշմամբ թույլատրվել է քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Անդրանիկի 54-րդ շենք, թիվ 29 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի վաճառքը՝ ուղղակի գործարքի միջոցով:

Սնանկության գործով կառավարիչը 21.12.2021 թվականին Դատարան է ներկայացրել Էմիլ Պետրոսյանի սնանկության գործն ավարտելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարանի 06.04.2022 թվականի վճռով ավարտվել է Էմիլ Պետրոսյանի սնանկության գործը:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 15.08.2022 թվականի որոշմամբ Բանկի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 06.04.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Դատավոր Ն. Կարապետյանը սույն գործով հայտնել է հատուկ կարծիք:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Բանկը (ներկայացուցիչ Օվսաննա Առաքելյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենսգրքի 87-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պարզապես չի հերքել փաստարկներով.

Սույն գործով դեռևս սպառված չեն գրավի առարկան և պարտապանին պատկանող գույքը հայտնաբերելու ուղղությամբ իրականացվող բոլոր միջոցները, և սնանկության գործի ավարտով ստացվում է, որ պարտապանն ազատվում է պարտավորությունների կատարումից, և գրավի առարկան առանց պարտավորությունը մարելու մնում է պարտապանի սեփականություն:

Վերաքննիչ դատարանը, քննելով Բանկի բողոքը, ընդհանրապես չի անդրադարձել բողաքաբերի կողմից նշած այն հանգամանքին, որ ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության կողմից 21.11.2021 թվականի և 17.01.2022 թվականի գրությունների համաձայն պարտապանին պատկանող տրանսպորտային միջոցների նկատմամբ հայտարարված հետախուզումը դեռևս շարունակվում է, և դեռևս առկա է դրանք հայտնաբերելու հնարավորություն:

Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենսգրքի 87-րդ հոդվածը, մասնավորապես, հաշվի չի առել այն հանգամանքը, որ գույքի առկայության և պարտատիրոջ պարտքի չմարման առկայության դեպքում ներկայացվել է վերջնական հաշվետվություն, այնինչ օրենքը հստակ սահմանում է, որ վերջնական հաշվետվությունը ներկայացվում է պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո, ինչպես նաև սույն որոշման արդյունքում անպարտաճանաչ պարտապանների համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ պարտատիրոջ պարտքերը չմարելու համար:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 15.08.2022 թվականի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Ըստ Կադաստրի կոմիտեի 15.04.2019 թվականի թիվ ՔՓ-1/2079 գրության՝ պարտապանի անվամբ քաղաք Երևան, Մալաթիա Սեբաստիա, Անդրանիկի 54 շենք, թիվ 29 բնակարանի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, իսկ Գեղարքունիքի մարզ, համայնք Վարսեր Երևանյան խճուղի 9/1 հասցեի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք **(հատոր 2-րդ, գ.թ. 1):**

2. Ըստ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 25.04.2019 թվականի թիվ 17/38345 գրության՝ պարտապանի անվամբ հաշվառված է «BMW 730i» մակնիշի 07 00 784 պետական համարանիշի ավտոմեքենան **(հատոր 2-րդ, գ.թ. 6):**

3. Ըստ տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 01BA166567 վկայականի պատճենի՝ պարտապանի անվամբ հաշվառված է «PORSCHE CAYENNE V8» 4.5L մակնիշի 34 AS 748 պետական համարանիշի ավտոմեքենան **(հատոր 2-րդ, գ.թ. 12):**

4. Դատարանի 23.08.2019 թվականի որոշմամբ հետախուզում է հայտարարվել պարտապանի անվամբ հաշվառված BMW 730i մակնիշի 07 00 784 պետական համարանիշի ավտոմեքենայի նկատմամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 51):**

5. Դատարանի 13.09.2019 թվականի որոշմամբ հետախուզում է հայտարարվել պարտապանի անվամբ հաշվառված PORSCHE CAYENNE V8 4.5L մակնիշի 34 AS 748 պետական համարանիշի ավտոմեքենայի նկատմամբ **(հատոր 2-րդ, գ.թ. 59):**

6. Ըստ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 18.10.2019 թվականի որոշման՝ ավարտվել է ՀՀ սնանկության դատարանի 13.09.2019 թվականի որոշման հիման վրա հարուցված թիվ 05429604 կատարողական վարույթը **(հատոր 3-րդ, գ.թ. 163):**

7. Սնանկության գործով կառավարիչը 21.12.2021 թվականին Դատարան է ներկայացրել Էմիլ Պետրոսյանի սնանկության գործն ավարտելու վերաբերյալ միջնորդություն **(հատոր 3-րդ, գ.թ. 136)**, որին կից ներկայացրել է վերջնական հաշվետվությունը, ինչի հիմքում դրել է հետևյալը. «Իմ կողմից կատարված հարցմանը ՀՀ ՀԿԱԾ-ից հայտնել են, որ Էմիլ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող PORSCHE CAYENNE V8 4.5L մակնիշի, պետ. համարանիշը՝ 34 AS 748 և BMW 730i մակնիշի, պետ. համարանիշը 07 00 784, արտադրության տարեթիվը՝ 1995թ., ավտոմեքենաները 01.11.2021թ. դրությամբ չի հայտնաբերվել:

Իմ կողմից կատարված գործողությունների, նախարարություններին և պետական կազմակերպություններին համապատասխան հարցումների արդյունքում, այդ թվում նաև ԱԻՆ պաշտոնական կայքի՝ mes.am «Լիցենզավորման գործընթաց» բաժնում, Էմիլ Վահագնի Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող այլ գույք և դեբիտորական պարտքեր չեն հայտնաբերվել, վերջին 5 տարում նրա կողմից օտարման գործարքներ չեն կատարվել»:

8. Սնանկության գործով կառավարիչը 20.12.2021 թվականի Ծանուցագրով պարտատերերին և պարտապանին տեղեկացրել է. «Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ

օրենքի, իմ կողմից ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել Էմիլ Վահագնի Պետրոսյանի սնանկության գործի ավարտի վերջնական հաշվետվությունը և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի հատկանիշներով սնանկության գործի ավարտի վերաբերյալ միջնորդությունը: Համաձայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ կետի, Պարտատերերը կարող են տասնօրյա ժամկետում ծանոթանալ դրանց՝ սնանկության գործով կառավարչի մոտ դեպոնացված օրինակին:»

9. Բանկի կողմից 27.12.2021 թվականին առարկություն է ներկայացվել սնանկության գործով ավարտի դեմ, որի համաձայն՝ «ՀՀ ԱՆ ՀԿ ԱԾ 01.11.2021թ. գրությամբ սնանկության կառավարչին տեղեկացվել է, որ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը դեռևս ՀՀ ճանապարհային ոստիկանությունից տեղեկատվություն չի ստացել:

Հետևաբար ստացվում է, որ հարկադիր կատարողի կողմից դեռևս չեն սպառվել գրավի առարկայի նկատմամբ հետախուզմանն ուղղված բոլոր միջոցառումները և հետախուզման գործընթացը շարունակվում է:

Ավելին, հետախուզման արդյունքում մեքենան չհայտնաբերելու պարագայում, Բանկը պատրաստվում է համապատասխան դիմում ներկայացնել ՀՀ դատախազություն պարտապանի նկատմամբ՝ գրավի առարկան թաքցնելու կամ ոչնչացնելու համար»:

10. Ըստ Ծառայության 17.01.2022 թվականի թիվ 214/03 գրության՝ պարտապանի անվամբ հաշվառված թվով երկու մեքենաները մինչ օրս գտնվում են հետախուզման մեջ և չեն հայտնաբերվել (**հատոր 3-րդ, գ.թ. 195**):

11. Քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու մասին 21.02.2022 թվականի թիվ Ք/Գ-13191522 որոշման համաձայն՝ «11.02.2022թ. ՀՀ Դատախազության, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունից՝ 180-181 հոդվածների կարգով ընթացքը լուծելու համար ոստիկանության Կենտրոնական բաժին է ստացվել «Յունիբանկ» ԲԲԸ-ի վարչության նախագահ՝ Մ. Հակոբյանի դիմումն այն մասին, որ իրենց Բանկի վարկառու հանդիսացող Էմիլ Պետրոսյանը, ով դատական վճռով ճանաչվել է սնանկ, գրավի առարկա հանդիսացող «Պորշ Կայեն» մակնիշի 34 AS 748 հաշվառման համարանիշներով ավտոմեքենան թաքցնում է ընկերությունից և սնանկության կառավարչից, ինչի հետևանքով իրենց պատճառվում է՝ 5.250.000 (հինգ միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով գույքային վնաս, որի վերաբերյալ բողոքում են: Նկատի ունենալով, որ առերևույթ առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 184.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով քրեական գործ հարուցելու օրինական առիթ և բավարար հիմք, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27, 57, 175-176, 180-182 և 187 հոդվածների պահանջներով. որոշեցի 1. Մ. Հակոբյանի դիմումի հիման վրա հարուցել թիվ՝ 13191522 քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 184. 1 հոդվածի 1-ին մասով և ընդունել վարույթ»: (**հատոր 3-րդ, գ.թ. 189**):

12. 26.05.2022 թվականի քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշմամբ թիվ 13191522 քրեական գործով վարույթը կարճվել է և Էմիլ Պետրոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 184.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ արարքում հանցակազմի բացակայության հիմքով: (**հատոր 4-րդ, գ.թ. 86-91**):

4. Հատուկ կարծիքի հիմնավորումները՝

Մինչև 15.04.2020 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և նույն օրենքով սահմանված կարգով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե նույն օրենքով սահմանված են այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի քննությունն իրականացվում է նույն օրենքով սահմանված կանոններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենսգրքով սահմանված կանոնները կիրառվի են Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...) սնանկության գործի վարման և դրա շրջանակում առանձին քաղաքացիական գործերի քննության նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ դատարաններում սնանկության գործերի վարումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով և «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սնանկության վարույթի նկատմամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերը կիրառվում են այնքանով, որքանով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերով այլ կանոններ նախատեսված չեն: Այսինքն՝ այն պարագայում, երբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերով նախատեսված է այլ կանոն, սակայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի նորմերը նշված հանգամանքի նկատմամբ սահմանել են այլ մոտեցումներ, ապա պետք է կիրառվեն «Սնանկության մասին» ՀՀ օրենքի դրույթները (*տե՛ս ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումի թիվ ՍՆԴ/0104/04/19 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.05.2020 թվականի որոշումը*):

Անդրադառնալով սնանկության ինստիտուտի նպատակներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ օրենքն ուղղված է ընկերության պարտատերերի շահերի պաշտպանությանը, որը դրսևորվում է նախևառաջ անբարենպաստ ֆինանսական դրություն ունեցող ընկերությունների ֆինանսական առողջացմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ընկերության գույքի հաշվին ընկերության պարտատերերի պահանջների բավարարմամբ (*տե՛ս Սահմանադրական դատարանի 12.04.2011 թվականի թիվ ՍԴՈ-954 որոշումը*):

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ անձին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է՝ այդ շրջանառության անվճարունակ մասնակիցներին ֆինանսապես առողջացնելու կամ նրանց քաղաքացիական շրջանառությունից դուրս մղելու նպատակով, որպեսզի վերջիններիս անվճարունակության հետևանքով չոտնահարվեն նաև քաղաքացիական շրջանառության մնացած մասնակիցների շահերը: ՀՀ վճռաբեկ դատարանը հավելել է, որ պարտապանին սնանկ ճանաչելը պարտավորությունը ոչ պատշաճ կատարած պարտապանի նկատմամբ դատական այնպիսի միջամտություն է, որի պայմաններում սահմանափակվում է

պարտապանի գործողությունների շրջանակը մինչև սնանկության վարույթի ավարտը, որպիսի կարգավորման նպատակը պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելն է (տե՛ս ըստ «ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ-ի դիմումի՝ Հարություն Վարդանյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը):

Մինչև 15.04.2020 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար:

Նույն հոդվածի 1-ին մասի «զ» կետի համաձայն՝ սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը վերլուծում է պարտապանի ֆինանսական վիճակը, սնանկության պատճառները, ինչպես նաև պարտապանի ֆինանսական, տնտեսական և ներդրումային գործունեությունը և նրա դրությունն ապրանքային շուկայում:

Մինչև 15.04.2020 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի կազմում է ներառվում պարտապանին պատկանող ցանկացած գույք, իրավունք կամ այլ ակտիվ, ներառյալ՝ մտավոր սեփականության օբյեկտ: (...):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կառավարիչը պարտավոր է պարտապանի լուծարման մասին որոշման ընդունման պահից դատարան ներկայացնել հաշվետվություն՝ պարտապանի գույքի վաճառքի, դրանից առաջացած միջոցների բաշխման, պարտատերերի պահանջների բավարարման, պարտապանի գույքի և ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) հավաքման ուղղությամբ իր իրականացրած միջոցառումների մասին:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով սնանկության վարույթում կառավարչի ունեցած դերակատարությանը՝ հարկ եմ համարում արժանագրել, որ սնանկության վարույթի մասնակիցների շարքում սնանկության գործով կառավարչին վերապահված է կենտրոնական դերակատարում: Դա պայմանավորված է այն իրողությամբ, որ սնանկության ինստիտուտի նպատակների իրագործումն ուղղակիորեն կախվածության մեջ է գտնվում սնանկության գործով կառավարչի գործունեությունից: Ընդ որում, իր գործունեության ընթացքում կառավարիչը հանդես է գալիս դատարանի, պարտատերերի և պարտապանի միջև կապող օղակի դերում՝ ապահովելով հավասարակշռություն պարտապանի ու պարտատերերի շահերի միջև: Սնանկության գործով կառավարչի առջև դրված խնդիրների լուծումը ենթադրում է նրա լիազորությունների համարժեք ծավալ:

Մինչև 01.07.2023 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվությունը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարան ներկայացվող վերջնական հաշվետվությանը կցվում են՝

ա) պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը,

բ) պարտատերերի պահանջների գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները,

գ) պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը:

Կառավարչի վերջնական հաշվետվությունը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ, և հիմնավորված միջնորդություն՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ:

Մինչև 15.04.2020 թվականը գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության վարույթի ցանկացած փուլում դատավորը, կառավարչի կամ պարտատիրոջ ներկայացմամբ և պարտատերերի առարկությունների բացակայության դեպքում, առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե՝

ա) պարտապանը չունի որևէ գույք.

բ) պարտապանի գույքը հայտնաբերել հնարավոր չէ.

գ) պարտապանի գույքն այնքան փոքրարժեք է, որ ողջամիտ չէ սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը.

դ) պարտապանի գույքի հայտնաբերման կամ ակտիվների հավաքման ուղղությամբ իրականացվելիք ծախսերը չեն արդարացնում սնանկության հետագա ընթացակարգերի իրականացումը:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո, սահմանված ժամկետում կառավարիչը դատարան է ներկայացնում վերջնական հաշվետվություն, որը քննելով էլ դատարանը, վճիռ է կայացնում պարտապանի լուծարման հետևանքով սնանկության վերաբերյալ գործն ավարտելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Մասնավորապես դատարանը վճիռ է կայացնում սնանկության վերաբերյալ գործի ավարտի մասին, եթե պարտապանը չունի որևէ գույք (*տե՛ս Մարգարիտա Շահինյանն ընդդեմ Էդգար Թորոսյանի սնանկության գործով կառավարիչ Սերյոժա Հարությունյանի և «Արդշինբանկ» ՓԲԸ-ի թիվ ԵԴ/5155/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 02.03.2023 թվականի որոշումը*):

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը սահմանել է պարտատերերի պահանջների ամբողջական բավարարման անհնարինության պայմաններում սնանկության գործը պարտապանի լուծարմամբ ավարտելու կարգը: Մասնավորապես, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ սնանկության գործով կառավարչի կողմից պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց ոչ ուշ, քան 15 օր հետո վերջինս պարտավոր է դատարան ներկայացնել վերջնական հաշվետվություն, որը պետք է պարունակի ամփոփ տեղեկատվություն՝ պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ, և հիմնավորված միջնորդություն, սնանկության գործն ավարտելու վերաբերյալ: Ընդ որում վերջնական հաշվետվությունն ինքնին բավարար չէ սնանկության գործն ավարտելու համար: Օրենսդիրն ամրագրել է դրույթ առ այն, որ վերջնական հաշվետվությանը կառավարիչը պետք է կցի նաև պարտապանի գույքի վաճառքը հավաստող փաստաթղթերը, պարտատերերի պահանջների

գրանցամատյանը՝ նշելով բավարարված պահանջները, պարտատերերի պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերը (տե՛ս ըստ «Յունիբանկ» ԲԲԸ-ի դիմումի թիվ ԵԿԴ/0090/04/13 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.07.2021 թվականի որոշումը):

Անդրադառնալով սնանկության գործի ավարտի վերաբերյալ օրենսդրի կողմից սահմանված իրավակարգավորմանը՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը դատարանին սնանկության գործի ավարտի վերաբերյալ վճիռ կայացնելու իրավական հնարավորություն վերապահել է օրենքով հստակ նախատեսված պայմանների, ինչպես նաև օրենքով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության պարագայում: Մասնավորապես, սնանկության գործն ավարտելու պայմաններն են՝ համապատասխան միջնորդության առկայությունը և դրա դեմ պարտատերերի առարկության բացակայությունը: Ընդ որում, նշված պայմանները պետք է գոյություն ունենան միաժամանակ: Ինչ վերաբերում է հիմքերին, ապա դրանք են՝ պարտապանի գույքի բացակայությունը կամ այն հայտնաբերելու անհնարինությունը կամ դրա փոքրաթեք լինելը և այլն, որոնցից մեկի առկայությունն արդեն իսկ բավարար է վարույթը վերոնշյալ երկու պայմանների գոյության պարագայում ավարտելու համար (տե՛ս ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի դիմումի թիվ ԼԴ4/0066/04/17 սնանկության գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.03.2022 թվականի որոշումը):

Վերոշարադրյալի հիման վրա հարկ եմ համարում արձանագրել, որ սնանկության գործով նշանակված կառավարիչը պարտավոր է իրականացնել օրենքով սահմանված որոշակի գործողություններ՝ պարտապանին պատկանող գույքի և այլ ակտիվների հավաքագրման ուղղությամբ: Մասնավորապես՝ պարտապանի գույքային դրությունն ուսումնասիրելու նպատակով սնանկության գործով կառավարիչը պարտավոր է օգտագործել գույքագրման արդյունքում ձեռք բերված ֆինանսական տվյալները, ձեռնարկել միջոցներ՝ պարտապանին պատկանող, սակայն երրորդ անձանց տիրապետության տակ գտնվող գույքը վերադարձնելու ուղղությամբ: Սնանկության գործով կառավարիչը պարտավոր է նաև պարտապանի գույքային դրությունը պարզելու և տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ կատարել համապատասխան մարմիններին, հաշվապահական հաշվետվությունների ստուգման ու գույքագրման արդյունքում տարածայնությունների հայտնաբերման դեպքերում բացահայտել անհամապատասխանության պատճառները, ձեռնարկել միջոցներ գույքի վերադարձման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում վերականգնել անշարժ գույքի փաստաթղթերը և իրականացնել այդ գույքի պետական գրանցում, սահմանված կարգով հայց ներկայացնել ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը վերադարձնելու ու վնասների հատուցման պահանջով: Վերոնշյալ գործողություններն ուղղված են պարտապանին պատկանող գույքի հայտնաբերմանը և համապատասխանաբար դրանց՝ սնանկության վարույթում պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղելուն:

Հարկ եմ համարում նշել, որ սնանկության գործը հնարավոր է ավարտել ինչպես պարտապանի ֆինանսական առողջացմամբ, այնպես էլ՝ պարտապանի լուծարումով: Սնանկության գործը պարտապանի լուծարումով ավարտելու իրավական հիմքերից մեկը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածն է: Այդ հիմքով սնանկության գործը կարող է ավարտվել, եթե պարտապանի գույքերի վաճառքից ստացված միջոցները սահմանված

կարգով բաշխելուց հետո այլևս բացակայում է այլ գործողությունների կատարման անհրաժեշտությունը: Այդ դեպքում կառավարիչը դատարան պետք է ներկայացնի սնանկության գործով վերջնական հաշվետվությունը, որը պետք է պարունակի՝ 1) *ամփոփ տեղեկատվություն պարտապանի ակտիվների հավաքման վերաբերյալ*, 2) *միջնորդություն, որում հիմնավորվում է պարտապանի սնանկության գործն ավարտելու անհրաժեշտությունը*:

Վերոնշյալ միջնորդությունը բավարարելու և սնանկության գործն ավարտելու համար էական է այն հանգամանքը, թե **կառավարիչը ձեռնարկել է արդյոք իրենից կախված անհրաժեշտ ու բավարար միջոցներ** պարտապանի ակտիվների հավաքման ուղղությամբ և ներկայացրել է արդյոք դրանց հավաքագրման հնարավորության կամ անհնարինության վերաբերյալ հստակ տեղեկություններ: Այսինքն՝ սնանկության գործով կառավարիչը պարտավոր է յուրաքանչյուր դեպքում ձեռնարկել իրենից կախված և պարտապանի գույքի հայտնաբերման համար էական նշանակություն ունեցող գործողություններ՝ չսահմանափակվելով գույքի գրանցում կամ հաշվառում իրականացնող մարմիններին հարցումներ կատարելով:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ են արձանագրել, որ իրավահարաբերության ծագման պահին գործած խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածով սահմանված կարգով՝ պարտապանի լուծարումով սնանկության գործն ավարտելու հարցը քննարկելիս դատարանները բոլոր դեպքերում պարտավոր են պարզել՝

1) *արդյո՞ք կառավարիչը ձեռնարկել է անհրաժեշտ և բավարար միջոցներ պարտապանի ակտիվների հավաքման ուղղությամբ*,

2) *արդյո՞ք կառավարչի կողմից ներկայացված վերջնական հաշվետվությունը պարունակում է ամփոփ ու հստակ տեղեկատվություն ակտիվների հավաքման վերաբերյալ*,

3) *արդյո՞ք միջնորդության մեջ նշված հիմնավորումները բավարար են սնանկության գործն ավարտելու համար*:

Վերոնշյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 18.10.2019 թվականի որոշմամբ ավարտվել է ՀՀ սնանկության դատարանի 13.09.2019 թվականի որոշման հիման վրա հարուցված թիվ 05429604 կատարողական վարույթը: Ըստ Ծառայության 17.01.2022 թվականի թիվ 214/03 գրության՝ պարտապանի անվամբ հաշվառված թվով երկու մեքենաները 17.01.2022 թվականի դրությամբ գտնվում են հետախուզման մեջ և չեն հայտնաբերվել:

Սնանկության գործով կառավարիչը 21.12.2021 թվականին Դատարան է ներկայացրել վերջնական հաշվետվությունը, ինչի հիմքում դրել է այն հանգամանքը, որ իր կողմից կատարված հարցմանը ՀՀ ՀԿԱԾ-ից հայտնել են, որ Էմիլ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող PORSCHE CAYENNE V8 4.5L մակնիշի, պետական համարանիշը՝ 34 AS 748 և BMW 730i մակնիշի, պետական համարանիշը՝ 07 00 784, արտադրության տարեթիվը՝ 1995թ., ավտոմեքենաները 01.11.2021թ. դրությամբ չի հայտնաբերվել:

Բանկի կողմից 27.12.2021 թվականին առարկություն է ներկայացվել սնանկության գործով ավարտի դեմ:

Դատարանն ավարտելով սնանկության վարույթն՝ արձանագրել է, որ սնանկության վարույթում կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ պարտապանը ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող թվով 2 ավտոմեքենաներ, որոնք չհայտնաբերվելու հիմքով Դատարանի 23.08.2019 թվականի և 13.09.2019 թվականի որոշումներով հայտարարվել են հետախուզումներ: Ծառայության կատարողական գործողությունների արդյունքում տրանսպորտային միջոցները չեն հայտնաբերվել, որը հաստատվում է Ծառայության 17.01.2022 թվականի թիվ 214/03 գրությամբ: Այլ կերպ ասած՝ սպառվել են պարտապանին պատկանող գույքը հայտնաբերելու ուղղությամբ սնանկության վարույթի ընթացքում իրականացվելիք բոլոր միջոցները:

Վերաքննիչ դատարանը Բանկի վերաքննիչ բողոքը մերժել է հետևյալ հիմնավորմամբ. «(. . .)տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ, թեև սույն դեպքում Բանկի պահանջը մնացել է առանց բավարարման, այնուամենայնիվ իրավաչափ է Դատարանի հետևությունն այն մասին, որ սնանկության գործի վարույթը ավարտելու հանգամանքը չի կարող կախվածության մեջ լինել պարտապանի վերաբերյալ քրեական գործի հարուցման հանգամանքից, քանզի, միևնույն է, պարտապանը չի կարող ազատ ճանաչվել իր պարտավորությունների կատարումից, ներառյալ «Սնանկության մասին» օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մասի «դ» կետով նախատեսված՝ հանցագործությամբ պատճառված վնասի հարուցման պարտավորություններից: Նշվածից հետևում է, որ Դատարանի՝ սնանկության գործն ավարտելու մասին վճռով պարտապանը չի ազատվել հանցագործությամբ պատճառված վնասի հարուցման պարտավորությունից, ուստի սնանկության գործի ավարտով չի խախտվում գրավի միջոցներից հետագայում բավարարում ստանալու իրավունքը, որպիսի պայմաններում հիմնավորված չեն այդ առնչությամբ բողոքում բերված փաստարկները»:

Սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ գնահատելով ստորադաս դատարանների եզրահանգումների հիմնավորվածությունը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Սույն գործով Դատարանը էմիլ Պետրոսյանի սնանկության վերաբերյալ գործն ավարտել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի հիմքով և Վերաքննիչ դատարանն այն համարել է իրավաչափ, մինչդեռ ստորադաս դատարանները պարտապանի սնանկության գործի ավարտի հիմքերի վերաբերյալ եզրահանգումներին են եկել, այն դեպքում երբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի հիմքով սնանկության վարույթն ավարտելու պայմանը՝ պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելու պահանջը պահպանված չի եղել, որպիսի պայմաններում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի հիմքով սնանկության գործն ավարտելու վերաբերյալ միջնորդությունն հիմնավոր չի կարող համարվել և ենթակա է մերժման:

Բացի այդ՝ ստորադաս դատարանները հաշվի չեն առել նաև այն հանգամանքը, որ սույն գործի փաստերի համաձայն՝ Ծառայության 18.10.2019 թվականի որոշմամբ ավարտվել է միայն ՀՀ սնանկության դատարանի 13.09.2019 թվականի որոշման հիման վրա հարուցված թիվ 05429604 կատարողական վարույթը, ինչպես նաև այն, որ Ծառայության 17.01.2022 թվականի թիվ 214/03 գրության համաձայն՝ պարտապանի անվամբ հաշվառված թվով երկու

մեքենաները 17.01.2022 թվականի դրությամբ գտնվում են հետախուզման մեջ և չեն հայտնաբերվել:

Հարկ եմ համարում արձանագրել, որ սույն դեպքում թեև հարուցված կատարողական վարույթն ավարտվել է, այնուամենայնիվ կատարողական վարույթի ավարտը չի կարող բնութագրվել որպես գույքը հայտնաբերելու անհնարինություն, չի կարող բացառել պարտապանի գույքի հետագա հայտնաբերումը, այն ևս պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղելու հնարավորությունը (ԱՊՊԱ ոլորտին առնչվող գործողություններ): Սա նշանակում է, որ կատարողական վարույթն ավարտելու որոշման հիմքով սնանկության վարույթը ավարտելու պարագայում սույն գործով պարտատերը շարունակում է հանդիսանալ որոշակի ակտիվների սեփականատեր, իսկ սնանկության վարույթի ավարտը հանգեցնում է նրան իր պարտավորություններից ազատման, մինչդեռ քանի դեռ գույքը հայտնաբերելու հնարավորությունը չի վերացել, ապա սնանկության վարույթի ավարտը կարող է զրկել պարտապանին այն գույքից բավարարում ստանալու հնարավորությունից, որն իրավաչափորեն կարող էր ակնկալել:

Հարկ եմ համարում նշել, որ գործում առկա են Կառավարիչն առնվազն զրկված չի եղել էմիլ Պետրոսյանին պատկանող ակտիվների հայտնաբերման կամ դրանց հայտնաբերման հնարավորության կամ անհնարինության վերաբերյալ հարցումներ կատարելու հնարավորությունից: Կառավարիչը պարտավոր էր չսահմանափակվելով հարկադիր կատարման ծառայության կողմից կատարված կատարողական գործողություններով, ինքնուրույն, կառավարչին տրված լիազորությունների հնարավոր բոլոր եղանակներով, այդ թվում՝ հարցում կատարելու, պարտապանի գույքի գույքագրում կատարելու, ինչպես նաև պարտատերերի ժողով հրավիրելու միջոցով փորձել բացահայտել էմիլ Պետրոսյանի ակտիվների հայտնաբերման հանգամանքը: Մինչդեռ, տվյալ դեպքում Կառավարչի կողմից էմիլ Պետրոսյանին պատկանող գույքի և ակտիվների հավաքագրմանն ու գույքագրմանն ուղղված գործողությունները թերի են կատարվել, և հետևապես դրանք անհրաժեշտ ու բավարար չեն էմիլ Պետրոսյանի՝ սնանկության վարույթն ավարտելու համար:

Այսպիսով, կառավարիչը մինչև սնանկության վարույթն ավարտելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելը չի կատարել օրենքով սահմանված բոլոր գործողությունները պարտապանի ակտիվների հավաքագրման և պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելու ուղղությամբ, ուստի կառավարչի միջնորդությունը՝ սնանկության վերաբերյալ գործն ավարտելու մասին հիմնավոր չէ:

Նման պայմաններում ստորադաս դատարանները, անտեսելով սնանկության գործն ավարտելու վերաբերյալ միջնորդության անհիմն լինելը, սխալ են կիրառել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածը, որպիսի պայմաններում սնանկության վերաբերյալ գործի ավարտն իրավաչափ չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ սույն գործով վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար:

Հետևաբար անհրաժեշտ էր վճարել բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 15.08.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել ՀՀ սնանկության դատարան՝ նոր քննության:

Դատավոր՝

ԷԴ. ՍԵԴՐԱԿՅԱՆ